ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2013 թվականի N 489-Ա

ք. Հրազդան

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի, հիմք ընդունելով Սոլակ համայնքի բնակիչ Հ.Հունանյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Հովիկ Հունանյանին հատկացնել 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Հավելված

ՀՀ Կոտայքի մարզպետի

հոկտեմբերի 18 -ի **N** 489- Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Հովիկ Հունանյան	Սոլակ համայնք	30 000	